ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ա.Ի.ԱԼԻԽԱՆՅԱՆԻ անվան
ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ЭКОНОМИКИ

**ЕРЕВАНСКИЙ ФИЗИЧЕСКИЙ ИНСТИТУТ**
**имени А.И.АЛИХАНЯНА**

ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ
ОРГАНИЗАЦИЯ

# Հ Ր Ա Մ Ա Ն

01.12.2009թ. N167/Կ

Ի լրումն 18.04.2009թ N46/Կ հրամանի, որի համաձայն ստեղծվել է Բելգիական «CYCLONE-30» արագացուցիչը (ցիկլոտրոն) Երևանի ֆիզիկայի ինստիտուտում տեղադրելու հարցը արդյունավետ լուծելու համար, առաջիկա բանակցությունների գործընթացին ինստիտուտի տնօրենին աջակցելու նպատակով խորհրդատվական խումբ,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Խորհրդատվական խմբին քննարկել Երևանի Ֆիզիկայի Ինստիտուտում նոր արագացուցչային համալիրի ստեղծման հարցը.
2. Խորհրդատվական խմբին՝
   - պատրաստել Երևանի Ֆիզիկայի Ինստիտուտի և Միջուկային Հետազոտությունների Միացյալ Ինստիտուտի Միջուկային Ռեակցիաների Լաբորատորիայի միջև համագործակցության վերաբերյալ արձանագրություն.
   - կազմել Ստենֆորդի գծային արագացուցչային կենտրոնի (SLAC) հետ ապագա համագործակցության վերաբերյալ ըմբռնման հուշագրի նախագիծ:
3. Իմ բացակայությամբ խորհրդատվական խմբի կոորդինատոր Ա.Ավետիսյանին անցկացնել խմբի նիստերը:
4. Հրամանը ուժի մեջ է ստորագրման պահից:

Ինստիտուտի տնօրեն Ա.Չիլինգարյան

կատ. Լ.Միքաելյան